ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 960-Ա « 13 » մարտի 2024թ.

«ԵՐԵՎԱՆ» ՓՈՂԱՅԻՆ ՆՎԱԳԱԽՈՒՄԲ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 52-րդ հոդվածի 1-ին մասի 6.1-րդ կետով.

1. Հաստատել «Երևան» փողային նվագախումբ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի մշակույթի և տուրիզմի վարչության պետի և սույն որոշման 1-ին կետով նշված համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենի վրա:

3. Որոշման կատարման հսկողությունը վերապահել Երևանի քաղաքապետի տեղակալ Լ. Հովհաննիսյանին:

4. Սույն որոշմամբ սահմանված գործողությունները տարածվում են 2024 թվականի մարտի 1-ից ծագած իրավահարաբերությունների վրա:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ

Հավելված
Հաստատված է
Երևանի քաղաքապետի
13 . 03 . 2024 թ.
հ. 960 - Ա որոշմամբ

«ԵՐԵՎԱՆ» ՓՈՂԱՅԻՆ ՆՎԱԳԱԽՈՒՄԲ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

դրամ

հ/հ	**Հաստիքների անվանումը**	**Հաստիքների քանակը**	**Հաստիքի պաշտոնային դրույքաչափը**	**Ընդամենը ամսական աշխատավարձը**
1	*2*	*3*	*4*	*5*
1	Տնօրեն	1.00	235,560	235,560
2	Գեղարվեստական ղեկավար և դիրիժոր	1.00	184,600	184,600
3	Գլխավոր հաշվապահ	1.00	135,200	135,200
4	Կադրերի տեսուչ	0.25	135,200	33,800
5	Տնտեսվար	1.00	135,200	135,200
6	Գրադարանավար	0.50	135,200	67,600
7	Հավաքարար	1.00	135,200	135,200
8	Երաժիշտ	24.00	135,200	3,244,800
9	Երաժիշտ-կոնցերտմայստեր	7.00	147,200	1,030,400
	ԸՆԴԱՄԵՆԸ	**36.75**		**5,202,360**

***Ծանոթություն.** հաստիքացուցակում ներառված չեն գիշերային և հանգստյան ու ոչ աշխատանքային օրերին աշխատանքի դիմաց աշխատանքային օրենսգրքով նախատեսված հավելումները:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ **ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ**